24444

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՔԱՅԼ

331.88
Գ-82

ԳՅՈՒՂՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ
1936

05 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

331.88
Գ-82
ան

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ

ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՔԱՅԼ

1009
38805-6

ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ № 19 ԳՈՐԾԱՐԱՆԻ
ՊՐՈՖԱԿՏԻՎԻ ՆԱՄԱԿՆ

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻՆ

ՊԱՏՈՒԱՐԱՏ — ԵՐԵՎԱՆ 1936

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՀ-ՍՍՀ
Մ. Մաշտոցի անվ.
Ս. Սպասիկյանի անվ.

24444

21.03.2013



ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ № 19 ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԴՐՈՖԱԿՏԻՎԻ ՆԱՄԱԿՆ
ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻՆ

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՔԱՅԼ

ՄԵՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵՑԻՆՔ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Թանգագի՛ն, մեր հարազատ
Իոսիֆ Վ.իսարիոնովիչ

Մեր այն վերջերս ՀԱՄԿԿ-ի քարտուղարների զեկուցումներից իմացանք, որ դու այս տարվա դեռ մայիս ամսին նշել ես պրոֆմիությունների յետ մնալը, պրոֆաշխատանքների և պրոֆղեկավարության յուրահատուկ ճգնաժամը։ Այս յետ մնալն առանձնապես արտահայտվեց վերջին ամիսներում, երբ պրոֆմիութենա-

կան կազմակերպություններն ստախանովյան շարժման պոչից դնացին։

Հետաքրքրությունը, բանվորների դժգոհությունն իրենց միության վատ աշխատանքներից— այդ բոլորը գոյություն են ունեցել նաև մեր տանիններորդ գործարանում։ Եվ յեթե մենք այսոր իրավունք ունենք ասելու, թե արդեն սկսել ենք հաղթահարել այդ հետամնացությունը, այդ միայն շնորհիվ այն բանի, որ վերակառուցում ենք ամբողջ պրոֆաշխատանքն ստախանովյան շարժման խնդիրներին համապատասխան։

Ստախանովյան շարժմանը համաձայն—ահա թե ինչպես պիտի աշխատի այժմ յուրաքանչյուր գործարկոմ, պրոֆկազմակերպիչ, պրոֆակտիվիստ։ Հենց այդպես ենք մենք ցանկանում աշխատել և այդ նոր ձևի աշխատանքի առաջին քայլերի մասին ե, որ ցանկանում ենք պատմել քեզ, մեր սիրելի Ստալին։

Մենք հպարտ ենք, որ տարիուկես առաջ Համարյա ամայի վայրում կառուցված մեր գործարանը դեկտեմբերի սկզբին, ժամկետից շուտ կատարեց իր առաջին տարեկան պլանը և այժմ ել ի հաշիվ ռեզերվների մոբիլիզացիայի, հրաժարվեց նոր՝ լրացուցիչ կահավորումից, որ նախատեսված եր 1936 թ. պլանով և արժանացավ դերագույն պատվի՝ քո անունը կրելուն։

Մենք հպարտ ենք նրանով, որ մեր յերիտասարդ գործարանում, որի բանվորության հիմնական մասը յերիտասարդությունն ե, բանվորների 52 տոկոսը սիստեմատիկ կերպով պարապում ե տեխուսուցմամբ։

Մենք հպարտ ենք, որ մեր գործարանի ստախանովականները թամբեցին տեխնիկան, քամում են նրանից հնարավորը և, դրա հիման վրա, չափազանց յետ են թողնում ամերիկյան բարձր նորմաները։

Մենք հպարտ ենք, որ մոտ որերս Մոսկվա՝ ընկ. Որջոնիկիձեյի մոտ դնացած 7 ստախանովականներից յերեքը՝ ընկ. ընկ. Ոչգիբեսովը, Գավրիլովը յեվ Ցապիկը պրոֆակտիվիստներ են։ Մենք հպարտ ենք, որ առաջին ստախանովականների մեջ (նրանց թիվը այժմ մեզ մոտ 420 ե) քիչ չեն պրոֆակտիվիստները, որոնք գործարանում իրենց անձնական որինակով առաջ են մղում ստախանովյան շարժման ծավալումը։

Ահա Տոլյա Նիկիտինը, Հոկտեմբերի հասակակից, աշխատում ե ցիլինդրի գլխիկների ձևավորման վրա և հերթափոխին ձևավորում ե 59 գլխիկ՝ ամերիկյան 27 գլխիկի նորմայի փոխարեն։ Տոլյան պրոֆկազմակրպիչ ե, ստախանովյան շարժման կազմակերպիչն իր խմբում։ (Ի դեպ՝ Տոլյան աչքի ընկավ անգամ մեր ստախանովական-

ների հաղարներ վաստակելու ֆոնի վրա. դեկտեմբերի 4-ին նա մեկ հերթափոխին վաստակեց 1200 ռուբլի)։ Ոսիպովը՝ հավաքման (сборка) ցեխի պրոֆկազմակերպիչն է, Պերշինը՝ խմբի պրոֆկազմակերպիչը, Սիմա Բրյուխովան՝ ցեխկոմի անդամը, Շչեվեյլեվը՝ խմբի պրոֆկազմակերպիչը, Մերնիկը՝ ցեխկոմի անդամը, Կալինկինը՝ ցեխպրոֆկազմակերպիչը։ Սրանք բոլորն էլ և ուրիշ սասնյակ պրոֆակտիվիստներ ստախանովականներ են ու հայանի յեն ամբողջ գործարանին։

«Կյանքն ավելի ու ավելի լավ է դարձել, ընկերներ։ Կյանքն ավելի ու ավելի ուրախ է դարձել, իսկ յերբ կյանքն ուրախ է, աշխատանքն ավելի հեշտ է գնում»։ Բո այդ խոսքերն, ընկեր Ստալին, իրապես մեր սրտից են բղխում։ Ճիշտ է։ Կյանքն իրապես ավելի ու ավելի լավ յեվ ուրախ է դարձել։

Բանվորության, հատկապես ստախանովականների, պահանջները շեշտակի աճեցին, իսկ մենք՝ պրոֆաշխատողներս շարունակում եյինք աշխատել հին ձեվերով, չհասկացանք բանվորների նոր, ավելի բարձր պահանջները միությունից, չկարողացանք այն բավարարել։ Մեզնից շատերը դժգոհում եյին. չգիտեյինք ի՞նչ անել. ինչպե՞ս աշխատել, դժգոհում եյին, թե տնտեսավարները մեզ չեն լսում, բանվորները ժողովներին չեն հաճախում, և այլն։ Իսկ յերբ հիմնովին խորհեցինք, թե վո՞րն է պատճառների պատճառը, նոր միայն հասկացանք, վոր այլ կերպ է հարկավոր վերակառուցել վոչ պրոֆմիութենական աշխատանքը, յելնելով նրանից, վոր մեր հիմնական խնդիրն է ապահովել բանվորների յեվ, առաջին հերթին, ստախանովականների կենցաղային կարիքների յեվ կուլտուրայի վերելքի նկատմամբ իրապես ստալինյան հոգատարությունը։

Մեզ մոտ գործարանում կառուցված է հոյակապ մսուր, ավարտված է «Մանկան պալատի» շինարարությունը, լավ է գործում պոլիկլինիկան։ Ահա և ակումբը, վորի վիճակի համար մենք՝ պրոֆաշխատողներս, կրում ենք լրիվ պատասխանատվություն, ակումբը, վոր գործարանային ավանի միակ հանգստի վայրն է, ի՞նչ վիճակում եր։ Ամոթ է վերհիշել, ընկեր Ստալին։ Առանձնապես ամոթ է այն պատճառով, վոր այսոր մեր աչքի առաջ է նույն շենքում բոլորովին ուրիշ ակումբ, վոր ստեղծվել է մեր իսկ ձեռքով։

Մի քանի ամիս առաջ աղտոտ, անհյուրընկալ ու դատարկ եր այն բարակը, ուր տեղավորված եր մեր ակումբը։ Բանվորներին, ինչպես ասում են, դժվար եր ներգրավել այնտեղ։ Իսկ այսոր նույն բարակը լեփ-լեցուն է։ Սենյակնե-

բում աշխուժություն է, ծիծաղ, կատակ։ Ցերգում են, նվագում գանազան գործիքների վրա, կարդում են գրքեր և լրագրեր։ Որեր են լինում, յերբ մենք գլուխ ենք ճաքացնում, թե ինչպես և ուր տեղավորենք փոքր ակումբում հանդիսատանալու, գվարճանալու, իրենց հետաքրքրող գործով զբաղվելու բոլոր յեկածներին։

Հենց վոր ակումբ ես մտնում, իսկույն կախարան. խնդրեմ, հանվեցեք։ Առաջին իսկ սենյակում առատ լույս է։ Տաք է։ Մաքուր է։ Հաճելի յե մտնել։ Ահա հենց այդ «մանրուքները» ակումբում այլ միջավայր են ստեղծում։ Ակումբը դառնում է կուլտուրական, նա սկսեց բանվորների աճած կուլտուրական պահանջներին ավելի համապատասխանել, և գործը բոլորովին այլ ընթացք ստացավ։ Մենք մոտենում ենք այն բանին, վոր ակումբը, վերջիվերջո, դառնա հանդստի և գեղարվեստական ինքնագործունեության զարգացման վայր։

Բացի սովորական խմբակներից (խմբակային յերգ, լարային և փողային նվագախմբեր, թատերական), մենք կազմակերպեցինք սիմֆոնիկ որկեստր, վորն այժմ պատրաստում է Ռոսսինիի «Սեվիլյան սափրիչ» ոպերայի նախերգանքը և Վագների ու Գլինկայի մի շարք ստեղծագործություններ։ Կազմակերպեցինք սոլո յերգեցողության խմբակ, ուր իրենց ընդունակություններն են զարգացնում փականագործ Դյենգինը՝ լիրիկ տենոր, ուսուցչուհի Շերստյուկովան՝ սոպրանո, անալին տնտեսուհի Լիտվինենկոն՝ սոպրանո, և ուրիշ 13 ընկերներ։ Մեր գործարանի սոլիստները յելույթներ են ունենում ակումբի բեմում և վայելում են ունկնդիրների համակրանքը։

Ակումբը պետք է իր աշխատանքներն այնպես տանի, վոր բանվորների, մասնագետների և ծառայողների տարբեր խավերը հետաքրքրությամբ հաճախեն ակումբը։ Յեվ մենք, ըստ յերևույթին, ճիշտ ճանապարհի վրա յենք, քանի վոր մեր ակումբն են հաճախում հարյուրավոր բանվորներ, նրանց կանայքը, ակումբում հաճախ են լինում գործարանի դիրեկտոր ընկ. Պոբերեժսկին, գործարանի կուսկազմակերպիչ ընկ. Ոգեռովը, գլխավոր ճարտարապետ ընկ. Մակեյեվը, №2 ցեխի պետ ընկ. Բագիլյովը։ Գործարանի հայտնի ստախանովականներ՝ Ժենյա Նոսկովը, Սաշա Վազանովը, Սիմա Բյուխովան ակումբի մշտական հաճախորդներն են։ Բանվորների և ծառայողների վոչ փոքրաթիվ մի մասը վոչ մի խմբակի չի մասնակցում, այլ գալիս է բուֆետում թեյելու, ընկերոջը կամ ընկերուհուն հանդիպելու, սեղանի բիլիարդ խաղալու։

Ցեթե խոսելու լինենք ստախանովականների

աբոնուԹյունների մասին, հապա պետք է ասենք վոր նրանց հատկացված են ակումբում առաջին կարգերը, նրանց յերեխաներն առաջին հերԹին են ընդունվում ակումբին կից մանկական գեղարվեստական դաստիարակության դպրոցը (դաշնամուրի դասարանում սովորում են 57 յերեխա, կլասիկ բալեԹ՝ 48 և կենդանագիր՝ 22). գրադարանը մեծ աշխատանք տարավ ստախանովականին տանը գրականություն մատակարարելու գործում։

Ակումբի միանգամայն անպետք աշխատանքն առաջներում մենք բացատրում եյինք նրանով, վոր մեր ունեցածը բարակ է և վոչ ԹԷ կուլտուրայի պալատ, իսկ բարակում ի՞նչ կարելի յե անել։ Այժմ մեզ համար պարզ է, վոր խնդիրը միայն շենքը չե։ Խնդիրն այն է, վոր ակումբը լինի կուլտուրական, վոր այնտեղ կարելի լինի լավ հանգստանալ յեվ բավարարել բազմազան կուլտուրական պահանջները, հատկապես գեղարվեստական ինքնագործունեության տարածումը։

Ի հարկե՝ միայն ակումբովչի սահմանափակվում կուլտուրական աշխատանքի վերակառուցումը, վորը դեռ տառապում է բազմաթիվ թերություններով։ Մի քանի հարյուր բանվորներ համառ կերպով վերացնում են իրենց անգրագիտությունն ու կիսագրագիտությունը։ Մենք

այժմ նախապատրաստում ենք բոլոր ստախանովականների բնակարանների ռադիոֆիկացիան։ Աշխատում ենք բավարարել ստախանովականների ուսման ծարավը. նրանցից 80 հոգի արդեն սովորում են։ Բայց այս հարցում չի կարելի շարլոն մոտեցում ունենալ. անհրաժեշտ է խիստ անհատական մոտեցում յուրաքանչյուր ընկերոջը։ Ա՛յ, որինակ, ստախանովական Նոսկովը ցանկանում է դաշնամուր նվագել սովորել, նա գործիքի գնման համար 2000 ռ. արդեն հետ է դրել, դրամը բերեց ակումբավար ընկ. Գրիշինին և ասաց. «ոգնիր դաշնամուր գնելու»։ Ի հարկե, գործարկոմն ոգնեց Նոսկովին դաշնամուր գնելու և նվագելը սովորելու գործում։

Մի խոսքով՝ այժմ կուլտաշխատանքների ծրագիրը չի կարելի կառուցել այնպես, ինչպես մի յերկու տարի առաջ։ «Ընդգրկել զրույցներով այսքան», «ներգրավել ուսման մեջ այս ինչ քանակությունը» և այլն։ Այժմ անհրաժեշտ է սկսել բանվորների պահանջների ուսումնասիրությունից և ծրագիր կազմել վոչ միայն ամենաբազմազան խմբերի ու կատեգորիաների, այլև առանձին անհատ ստախանովականների պահանջների բավարարման հիման վրա։

Ընկեր Ստալին, չենք կարող լռել նաև մի կուլտուրական ձեռնարկման մասին, վոր հաջող-

վեց մեզ կենսագործել։ Դա «զահլիճ-սպասարանն» է, կամ, ինչպես կոչում են գործարանում՝ «կուլտկայարանը»։ Մեր գործարանն աշխատում է յերեք հերթի և ահա Նոյեմբեր 7-ի առթիվ գործարկումն անցողիկ սենյակից վոչ հեռու կահավորեց «զահլիճ-սպասարանը» հաջորդ հերթափոխությունների բանվորների համար։ Դա 4 սենյակ է, ուր կտեղավորվի մի քանի հարյուր բանվոր։ Կան զանազան խաղեր, վոչ թանգ բուֆետ, նստարաններ, սեղաններ։ Հերթափոխությունից ժամ—ժամուկես առաջ հավաքվում է ժողովուրդը, գալիս է գարմոնիստ Իլինը և սենյակներից մեկում, ցանկացողների համար, սկսվում են պարերը։ Յերիտասարդ բանվոր-բանվորուհիները մինչ հերթափոխության սկսվելը պարում են «ռուսականը» ֆոկստրոտ։ «Կուլտկայարանում» զանազան զրույցներ ենք անցկացնում։ Այդ «կուլտկայարանն» որ-որին գործարանում մեծ հեղինակություն է ձեռք բերում, բանվորության ավելի մեծ քանակություն է հավաքում։ Իսկ հերթափոխից 10 րոպե առաջ լույսի ազդանշանն ազդարարում է՝ «համեցեք աշխատանքի»։

Յեվ ծիծաղի, կատակների ու հանաքի աղմուկով դատարկվում է «զահլիճ-սպասարանը» մինչ հաջորդ հերթափոխությունը։

Ի հարկե, բանվորության վոչ միայն կուլտուրական, այլև կենցաղային պահանջներն են աճել։ Դա ապացուցվում է մի շարք ցուցանիշներով։ Վերցնենք մեր ԲՄԲ-ի ապրանքաշրջանառությունը։ Ոգոստոսի վերջին կազմում էր 768.000 ռուբլի, իսկ Նոյեմբերին՝ միլիոնից արդեն քիչ պակաս։ Բանվորները, մասնագետները, ծառայողները և, հատկապես, ստախանովականները պատրաստի հագուստի (միայն բարձր վորակի), ԵՋՍ ռադիո-ընդունիչների, պատեֆոնների, ժամացույցների մեծ պահանջ են ներկայացնում։ ԲՄԲ-ի աշխատակիցները հայտարարում են, վոր լավ զգեստների և կուլտ-ապրանքների այդպիսի հսկա պահանջ յերբեք չի յեղել։ Որինակ, մոտ որերս խանութներում յերեվաց մետրն 97 ռուբլանոց սուկնո։ Անմիջապես խլեցին։ Այդ ամբողջը շատ հեշտ է մեկնաբանվում. կյանքն ավելի լավ է դարձել։

Գործարանի վարչությունը կառուցեց վոչ վատ ֆաբրիկա-խոհանոց, կազմակերպեց հատուկ թեյարան, բացված է դիետիկ ճաշարան, Նոյեմբերից գործում է մանկական կաթնային խոհանոցը, առողջապահական կայանին կից կազմակերպվում է գինեկոլոգիկ սենյակ, կարելի յե դեռևս տասնյակ կարևոր ձեռնարկումներ թվարկել, վորոնք բարելավում են բանվորության կենցաղը։

Բայց չեթե խոսելու լինեք գործարկոմի, պրոֆ-կազմակերպության մասին, հապա նա մինչև վերջերս նաև կենցաղային սպասարկման հարցերում ապրում եր «չերեկվա որով»։ Ցեվ միայն վերջերս է, վոր մենք սկսել ենք նոր ձեվով ձեռնարկել մյուրեյան անդամների կենցաղային պահանջների բավարարմանը։

Ի՞նչ նվաճումներ ունենք արդեն։

Գործարկոմի պահանջմամբ առաջին 3 ստախանովականներ՝ ընկ. ընկ. Նոսկովը, Ցանկինը, Բրյուխովան փոխադրված են լավ բնակարաններ։ Վասյուկովը յեվ Վագանովի բնակարանները վերանորոգված են։ 70 ստախանովականների ամրացված են լավագույն բժիշկներ և պրոֆեսորներ, վորոնք ստախանովականներին ամենորյա բժշկական հսկողության տակ են առել։ Ցեվ հենց վոր պարզվեց, թե ստախանովական Կեմենցոնովի սանատորիական բուժման կարիք ունի, մենք նրան անմիջապես Ղրիմ ուղարկեցինք, ստախանովական Զաշչուխինին կնոջ հետ՝ նույնպես հարավ։

Դեկտեմբերի 6-ին պրոֆակտիվի ուժերով 100 ստախանովականի կենցաղային պայմանների ուսումնասիրություն անցկացրինք։ Մենք մանրամասն պարզեցինք՝ ով ինչի կարիք ունի, ով ինչ պահանջներ ունի։ Այժմ ուսումնասիրության

արդյունքներն ընդհանրացվում են, վորից հետո գործարկոմը յուրաքանչյուր ստախանովականի նկատմամբ հատուկ միջոցների կդիմի։

Մեր հիմնական խնդիրն է՝ ոգնել ստախանովականներին՝ ըստ իրենց բարձր աշխատավարձի ձեռք բերելու այն, ինչի կարիք ունեն նրանք։ Իսկ դա մեր պայմաններում բավական բարդ խնդիր է, քանի վոր մեր ԲՄԲ-ը ավելի քիչ ապրանք է ներմուծում, քան կարելի յե վաճառել (և տարբերնակ բան է, օրինակ՝ Մոսկվայում խանութներում ապրանք կարելի յե և՛ ռադիո, և՛ պատեֆոններ գտնել, իսկ մեզ մոտ չեն ներմուծվում)։

Վորպես ժամանակավոր միջոցառում, մենք կիրառում ենք հետևյալը. հաշվի յենք առնում ստախանովականներին ապրանքներից ինչ է պետք և ձգտում ենք ԲՄԲ-ի միջոցով կատարել այդ անհատական պատվերները՝ Մոսկվայում, Սվերդլովսկում և Պերմում գնումներ կատարելու ճանապարհով։ Այդ ձևով մեզ հաջողվեց ձեռք բերել ստախանովական Ոզգիբեսովի ճաշակով վերարկու, ստախանովական Նոսկովի և ուրիշ մի քանիսի ճաշակով՝ կոստյումներ։ Բացի դրանից, ԲՄԲ-ի արհեստանոցներում զգեստ և կոշիկ կարելու որդերները նոյեմբերից առաջին հերթին տրամադրվում են ստախանովականներին։

Բայց դա հարցը չի լուծում։ Գործարկոմը

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍԽՀ-ՀՍՍՀ Մ. Ա. Մաշտոցի անվան

պետք է ասուզի, թե ԲՄԲ-ին ինչպես է մատակարարում ապրանքավաճառացանցը։ Նա պետք է պայքարի ապրանքների ներմուծման ավելացման համար։ Դա ռեալ ոգնություն կլինի թե այսրվա և թե վաղվա ստախանովականներին։

Մեզ մոտ վատ չի աշխատում փոխոգնության դրամարկղը։ 11 ամսվա ընթացքում տրված է 2000 փոխարինաբար և 100-ից ավելի անվերադարձ վարկ։ Նրա ոգնությունն ստախանովականներին հիմնականում արտահայտվում է ամեն տեսակի կապիտալ ներդրումների (տուն շինել, դաշնամուր գնել և այլն) համար յերկարատև վարկ տալով։

Մենք, ընկեր Ստալին, այստեղ կանգ չենք առնի գործարկոմի ֆաբրիկա-խոհանոցի լավ աշխատանքի, բարակներում կուլտուրական կենցաղի համար մղած պայքարի վրա, քանի որ այդ առարեզում դեռ շոշափելի արդյունքների չենք հասել։ Բայց կհասանենք, ընկեր Ստալին, շատ շուտով կհասանենք։ Վստահորեն այդ խոստանում ենք։

Այն, գործարկոմի կենցաղային աշխատանքն ստիպված ենք նորից վերակառուցելու, քանի որ մարդիկ, հատկապես տեխնիկային տիրապետած մարդիկ, խոշոր չափով փոխվել են վոչ միայն արտադրության մեջ, այլև կենցաղով։ Մեզնից շատերն արդեն մոռացել են կարտոֆիլ, հացի, մսի համար հոգս ունեցած ժամանակը։ Մեր գործարանում ինչքան ուզես, սենդամքերֆներ կան. խանութներն անարգել վաճառում են դրանք։ Հետաքրքիր է, որ այս տարի ծննդաբերությունն ուժեղ աճեց։ Մեզ կենտկոմը ստացավ բյուջեյով հղիության նպաստ և յերեխաների սննդադրամ ենք նախատեսել 40.000 ռուբլի։ Իսկ մենք 11 ամսում արդեն 80.000 ռ. յենք ծախսել։

Կամ ահա, առաջին հայացքից աննշան մի այսպիսի փաստ. մենք արդեն ունենք տասնյակներով բանվորներ, որոնք պատրաստվելով հյուր կամ թատրոն գնալու՝ պահարանը բաց են անում, ինոջ կամ իրենք իրենց հետ խորհրդակցում են, թե յերեք չորս կոստյումներից վոր ոյսոր հագնեն, դյուժինով վոզկապներից վոր ոյսոր կապեն։

...Մեր հիմնական խնդիրը դարձնելով ստախանովականների կուլտուրական ու կենցաղային կարիքների ստալինորեն հոգացումը՝ մենք սկզբից վճռականորեն հրաժարվեցինք «սոբեսային տրամադրություններից»։ Ստախանովականը գործարկոմի նվերի կարիքը չունի։ Ցեվ մեզ թվում է, որ սխալվում են այն գործարկոմները, որոնք ստախանովականներին կոստյում, կոշիկ, թատրոնի ձրի տոմս են մատուցում և այլն։ Ստախա-

նովականը բավականին շատ է վաստակում, վոչ կարողանա գնել այն ամենը, ինչի կարիք ինքն ունի։ Իսկ մեր խնդիրն է ոգնել իրականացնելու իր ցանկությունը։ Ինչ վերաբերում է նյութական ոգնությանը, դա պետք է ուժեղացնել առաջին հերթին բազմանդամ ընտանիքով բանվորներին, ծննդկաններին և ցածրորակ բանվորներին, վորոնք բարձրացնում են իրենց վորակը և տիրապետում են տեխնիկային։

Վերջիններիս նկատմամբ մենք առանձնապես ուշադիր պիտի լինենք։ Չէ՞ վոր հենց ինքը ընկերը Ստալին, ստախանովականների խորհրդակցությունում արտասանած ճառում, վորը բացեց մեր աչքերը ստախանովյան շարժման մեծագույն նշանակության և պերսպեկտիվայի նկատմամբ, ընդգծեցիր, վոր «խնդիրն այն է, վոր ոգնենք ստախանովականներին ավելի ծավալելու ստախանովյան շարժումը յեվ դա խորությամբ ու լայնությամբ տարածելու...»։ Ստախանովականների մասին հոգան այսորվա մեր աշխատանքի կենտրոնը դարձնելը բոլորովին չի նշանակում, թե գործարկոմը, կամ ցեխկոմը և պրոֆկազմակերպիչը միայն այսորվա ստախանովականների մասին պիտի հոգան։ Դու ասիր՝ «Լայնքով և խորությամբ»։ Նշանակում է մենք, պրոֆաշխատողներս հոգատարությամբ շրջապատելով ստախանովականներին, մարդկանց, վորոնք արդեն թամբել են տեխնիկան, պարտավոր ենք ոգնել յեվ մյուս բանվորներին՝ գնալու ստախանովյան ճանապարհով, հասնելու առաջավորների մակարդակին։

Այնից առաջ մենք ամեն որ ստախանովականների աշխատանքի արդյունքները մասսայականացնում ենք։ Յուրաքանչյուր ցեխում կախված է պլակատ. «Մեր ցեխի ստախանովականների աշխատանքների արդյունքները մեկ որում». ազգանունը, առաջադրանքը, կատարման տոկոսը, աշխատավարձը։ Այդ աշխատանքը տանում են ցեխկազմակերպիչները, և պետք է ասել, վոր այդ հասարակ պլակատները լավ ագիտացիա են ստախանովյան մեթոդների համար։

Բացի այդ, ամեն որ բոլոր հերթափոխությունների, աշխատանքից առաջ, բաժիններում և մասերում պրոֆկազմակերպիչները հրավիրում են տարոպեյական տարադրական խորհրդակցություններ կամ, ինչպես մեզ մոտ կոչում են՝ «ֆիցյեռ», վարպետների և բրիգադիրների պարտադիր մասնակցությամբ։ Այստեղ համառոտակի ամփոփվում են նախորդ որվա արդյունքները և հաղորդվում և այսորվա աշխատանքի պլանը։ Չեն ինքնին հին է, բայց ստախանովյան շարժումը նորից կյանքի կոչեց։

№ 2 ցեխում մենք մացրինք «ստախանովականի ակնկալության գիրք», ուր ստախանովականները գրում են աշխատանքն արգելակող բոլոր յերևույթների մասին։ Ցեխի ադմինիստրացիան շտապ վերացնում է դրանք։

Մենք այժմ սկսել ենք յեվ արտադրական խորհրդակցություններ հրավիրել բոլոր մասնագիտությունների։ Սկսեցինք «նեղ տեղից»՝ ֆորմովկայից։ Հրավիրեցինք № 2 ցեխի ֆորմովշչիկներին։ Ստախանովականները ճնացած ընկերներին մանրամասն բացատրեցին՝ ինչպես են իրենք կազմակերպում աշխատանքը, իսկ վարպետները՝ թե ինչպես են ոգնում ստախանովականներին։ Վորոշ ժամանակից հետո ֆորմովկայի դետալների քանակն այնքան ավելացավ, վոր մատուցումն սկսեց հետ մնալ։ Ա.Ն ժամանակ հրավիրեցինք ցեխային արտադրական խորհրդակցություն, և բանվորներն առաջարկեցին մատուցումը կոնվեյերով կազմակերպել։ Դա այժմ արդեն աշխատում է, և մատուցումը հետ չի մնում։

Այդպիսի յուրաքանչյուր խորհրդակցություն վոչ ստախանովականների համար դպրոց է, ինչպես և դպրոց են հանդիսանում ստախանովականների ինքնահաշվետվությունները գործարկոմի պլենումում։

Սակայն, թանգագին ընկեր Ստալին, պարզ

պիտի ասենք, վոր ստախանովականների փորձի փոխանակման իմաստով մենք անգամ մի տան ներսը չենք արել, ինչ կարելի յեր անել։

Մեզ բոլորովին չի բավարարում նայեվ արտադրական խորհրդակցությունների վորակը։ Մենք մեծ մասամբ չենք կարողանում դրանք ոգտագործել պայքարելու անկանոնությունների դեմ, վորոնք արգելակում են ստախանովյան շարժման ծավալումը։ Այժմ կուղղենք դա։

Յեվ յեթե առաջ մեզնից շատերին պարզ չեր թե գործարկոմը և պրոֆկազմակերպիչներն իրապես ինչ պիտի անեն ստախանովյան շարժման կազմակերպման գործում, այժմ փորձը մեզ այդ լիովին բացատրեց։ Անմիջական կազմակերպիչը՝ վարպետը, բրիգադիրն է։ Մենք՝ պրոֆաշխատողներս նրան ոգնում ենք ստախանովյան վաստակի պրոպագանդով, ստախանովականների աշխատանքի մեթոդների փոխանակմամբ, արտադրական խորհրդակցությունների միջոցով, ստախանովյան շարժման ծավալմանը խանգարող անկանոնությունները յեռեվան հանելով յեվ վերացնելով, բանվորներին տեխուսուցման մեջ ներգրավելով։

Մեծ հաճույքով կարող ենք ասել, վոր մեր գործարանի դիրեկտոր ընկ. Պոբերեժսկին և ցեխերի պետերն ամեն կերպ աջակցում են ստախանովյան շարժման զարգացմանը։

Ստախանովյան շարժման հետ համաքայլ գնալու համար մենք սկսեցինք փշրել նաև պրոֆաշխատանքի կազմակերպման հին ձևերը։ Միությունը գլխավին բոլոր անդամների կարիքներին և պահանջներին գործարկոմի աշխատանքը մոտեցնելու նպատակով՝ մենք, մասնավորապես գործարկոմում մշցրիևի ամբողջ որվա հերթապահություն։ Բացառիկ չեն այժմ դեպքեր, երբ գործարկոմի անդամները քննարկում են բերանացի բողոքներն ու հայտարարությունները գիշերվա ժամի 3-ին կամ առավոտյան ժամի 6-ին։

Մենք այժմ հիմնովին ձեռնամուխ ենք լեղել պրոֆդեմոկրատիայի ամրացմանը։ Յեվ, ընկեր Ստալին, հպարտությամբ ենք քեզ հայտնում, որ այսոր մեր գործարանի ամբողջ պրոճակտիվի մեջ, սկսած խմբերի պրոճկազմակերպիչներից յեվ վերջացրած գործարկոմի նախագահով, չկա վոչ մի նշանակված, բոլորս ել միությանանդամների կողմից ընտրված ենք։ Մենք գործարկոմի նախագահություն չունենք, վորը սովորաբար փոխարինում է պլենումին։ Գործարկոմի աշխատանքին ուղղություն և տալիս պլենումը, վորը պարբերաբար, 3 ամիսը մեկ, հավաքվում է պրոֆաշխատանքի հիմնական խնդիրները լուծելու համար։

Մենք այժմ սկսում ենք նախապատրաստվել

վերընտրություններին։ Մոտ որերս դուրս կգանք բանվորների առաջ հաշվետու լինելու մեր աշխատանքի մասին։ Հիմնական խնդիրը, վոր միության անդամների առաջ լայն չափով հաշվետու լինելու գործում մենք դնում ենք, դա պրոֆաշխատանքների բացերի սուր ինքնաքննադատության ծավալման, գործարանի ստախանովականների շարքերից ավելի մեծ քանակով կամավոր ակտիվ հավաքագրելու և պրակտիկ աշխատանքների մեջ ներգրավելու խնդիրն է։ Մեկի այսոր արդեն գործարանում հաշվում ենք մոտ 700 պրոճակտիվիստ։ Քաղխմբերի պրոֆկազմակերպիչները՝ ընկ. ընկ. Ոսիպովը, Մակա իսիինաճ, Շչավելյովը և մյուսները լավագույն ակտիվիստներն են, վորոնք արտադրությունից ազատ ժամանակ կատարում են պրոֆաշխատանք։ Մոտ 300 բանվոր, բանվորուհի և բանվորների կանայք աշխատում են մասնավորապես վորպես կուլտակտիվիստներ։ Յեվ միայն շնորհիվ դրա յե, վոր մեր գործարկոմի շատը փաստորեն ավելի փոքր է, քան թուլլատրված է Միության կենտկոմի՝ կողմից։ Մենք այս փաստն առանձնապես նշում ենք, քանի-վոր առաջ տարեցտարի գործարկոմի վարձու ապարատի պահպանման համար գործարկոմի միջոցները գերծախսվում ելին, իսկ գործարկոմցիները մրմրում ելին՝ մեր վարձու աշխատողները քիչ են...

Աճում է մեր ստորին պրոֆակտիվը։ Մասի պրոֆկազմակերպիչ ընկ. Պերշինը բանվորությունից առաջ է քաշվել վարպետ, պրոֆկազմակերպիչ ընկ. Սեկոլովը՝ բանվորությունից՝ բաշխիչ վարպետ։ Կարելի յե հիշատակել պրոֆկազմակերպիչներ Տոմիկովի, Եստերնիկի, Տյուլենյեվի անունները, որոնք, շնորհիվ արտադրության տեխնիկային տիրապետելուն, շաբաթային բանվորությունից առաջ քաշվեցին բրիգադիր, վարպետ. կարգն էլ բարձրացվեց։ Մակայն ստորին պրոճակտիվ պատրաստելու յեվ անեցնելու մեր աշխատանքը դեռ միանգամայն անբավարար է, և դա մենք պարզ գիտակցում ենք։

Բանվորների մոտ պրոֆկազմակերպության ավտորիտետի անհրաժեշտ պայմանն ընդունված վորոշումների գործնականությունն է։ Գործնականությունը, այսինքն՝ սկսված գործը մինչև վերջը հասցնելում մենք պինդ ենք ձեռնարկել։ Որինակ՝ ֆաբրիկա-խոհանոցի ճաշարանում գործարկոմի անդամի հերթափոխության ժամանակ պարզվել է, վոր գիշերվա հերթի բանվորները վատ են սպասարկվում (կեբակրի վորակը վատ է, հանդերձարանում և զուգարանում լույս չկա, և այլն)։ Մենք այդ խնդիրներն առաջադրեցինք գործարանի դիրեկտորին և կարողացանք այդ

խայտառակությունները լիովին վերացնել։ Ուրիշ որինակ՝ շատ բանվորներ գործարանից հեռու յեն ապրում և նրանցից ստացվեցին բողոքներ՝ ավտոմեքենայի ընդհատումներով մատուցման մասին։ Մենք այդ խնդիրը քննարկեցինք պլենումում, ստացանք դիրեկտորի հրամանը մեքենայի մատուցման ճիշտ գրաֆիկ սահմանելու մասին։ Մի խոսքով՝ հարցը կարգավորվեց։

Այժմ մենք խոշոր աշխատանք ենք տանում պրոֆմիութենական տնտեսության կարգավորման ուղղությամբ։ Սկսեցինք պրոճտոմսերի փոխանակումից։ Նոր տոմսերը պահվում են անձամբ գործարկոմի նախագահի մոտ։ Փոխանակումը լուրջ կազմակերպեցինք։ Ցեխային պրոֆկազմակերպիչները միությունից անդամից վերցնում են հին տոմսը, իսկ հավաքարարից՝ հաշվառման քարտը և այդ բոլորը բերում են գործարկոմ։ Գործարկոմում համեմատում են բոլոր տվյալները, պարզում ստուգ հարցերը։ Ապա նշանակված որն ու ժամին ցեխպրոֆկազմակերպչի հետ գործարկոմ է գալիս միության անդամը, և այստեղ գործարկոմի նախագահը կամ տեղակալը մի անգամ ևս համեմատում է տվյալները, վորից հետո նույն տեղում լրացվում է նոր հաշվառման քարտն ու նոր պրոֆտոմսը, իսկ հին փաստաթղթերն արխիվ են հանձնվում։ Պրոֆտոմսերը

հետ պահելու առանձին դեպքեր են լեղել մեզ մոտ։ Ահա մի օրինակ. մի բանվորուհի Ցեմկերա-միկների միության պրոֆանդամատոմս ուներ, բայց առանց ստորագրությունների, կնիքի և պրոֆստաժի մասին նշումների։ Նրա տոմսը մենք պահեցինք և տեղեկություններ ենք հավաքում, որից հետո կքննենք պրոֆխմբակում։ Մտադիր ենք հունվարի 15-ին ավարտել պրոֆանդամատոմսերի վերանայումը և կանոնավոր վիճակում ունենալ պրոֆանտեսությունը։

..... Քո նշանակալից խոսքերն այն մասին, «որ «Կյանքն ավելի լավ և դարձել, կյանքն ուրախ է դարձել» ստիպեցին մեզ լուրջ մտածել նաև իրենց՝ գործարկոմի և պրոֆկազմակերպիչների աշխատանքի կուլտուրական վոճի մասին։ Այսոր, — շաբաթներով չծիլված, թափթված հագնված, հավերժ շտապող, խառնաշփոթվող պրոֆաշխատողը, որպիսիներին, մենք հաճախ տեսնում ենք գործարկոմի՝ թանձր ծխով լցված ու խունացած սենյակներում, — այսոր այդպիսի պրոֆաշխատող չի կարող գլխավորել կուլտուրական կյանքի մասին՝ տանել մասսաների մեջ։

Ցավ ահա մեր գործարկոմում այժմ մաքրություն է, կարգ ու կանոն, անդամ վարագույրներ են կախված։ Ցեթե վաղեմի սովորությամբ մարդ կփորձի ծխախոտի մնացորդը դեռին գցել, անհարմար է զգում։ Մեր գործարկոմցիները հասկացան ինչ բան է աշխատանքի կուլտուրական վոճը, և դա նրանց վրա արտաքին դրական թողեց։ Մի խոսքով՝ հենց միջավայրը գործարկոմում դառավ այլ, ավելի կուլտուրական։

Մենք այս ամենը քեզ պատմում ենք, ընկեր Ստալին, վոչ թե նրա համար, որ պարծենանք ինչ որ հաջողություններով. հաջողությունների մասին դեռ վաղաժամ է խոսել այդպիսին դեռ չունենք։ Մենք պատմում ենք ամենաառաջին քայլերի մասին, որ ձեռնարկել ենք նրա համար, որ ստախանովյան շարժման զարգացման և պրոֆմիությունների աշխատանքների մասին քո տված ցուցումների հիման վրա վորքան կարելի է շուտ հաղթահարենք մեր պրոֆաշխատանքների յուրահատուկ ճգնաժամը և հետամնացությունը։ Մենք հաճույքով ենք քեզ պատմում, որ սկսում ենք ստախանովյան շարժմանը համաքայլ ընթանալ և, շնորհիվ դրա՝ պակասում է մեր գործարանի բանվորների դժգոհությունն իրենց միությունից. բանվորները, հատկապես ստախանովականները,

սկսում են զգալ միության հոգն իրենց կուլտուրական և կենցաղային պահանջների նկատմամբ։ Յեվ դա մեզ աշխուժացնում է, ուրախացնում, վստահություն է ներշնչում, վոր գործարանի կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ, վոր մեզ ամեն որ ոգնում է ուղղվելու, մենք լիկվիդացիայի կենթարկենք մեծ ֆանակությամբ լուրջ թերությունները, վորից յեվ այսոր տուժում է մեր պրոճաշխատնիքը։

Մի՞թե մենք կարող ենք հաշտվել այն դրությանը, վոր մի շարք խանութներում առևտուրը վատ է կազմակերպված, վոր դեռ կան վատ, անկուլտուրական հանրակացարաններ, ուր թղթախաղով են տարվում, վոր վոչ բոլոր ստախանովականներն են սովորում, վոր պրոֆակտիվի սիստեմատիկ դաստիարակումը բացակայում է։ Մենք իրավունք չունենք այդ և ուրիշ շատ բացերի հետ հաշտվել։

Յեվ մենք, ընկ. Ստալին, քեզ բոլշևիկյան խոստում ենք տալիս՝ առանց ձեռքերը ծալելու, բոլշևիկորեն շարունակել պայքարը։

Վոր առաջիկա ամիսներում ստախանովականների շարքերն զգալի կերպով աճեն։

Վոր առաջիկա ամիսներում մեր գործարանի բանվորական կոլեկտիվը կարողանա ասել. այո՛, մեր գործարկումը, մեր պրոճկազսակերպությունները ստախանովյան շարժմանը համամասնելի են ընթանում, նրանք վերակառուցվեցին նոր խնդիրներին համապատասխան, նրանք ստալինորեն են սպասարկում ստախանովականների խիստ կերպով աճած կուլտուրական յեվ կենցաղային պահանջները։

Պրոֆաշխատանքը պետք է դառնա և կդառնա արժանի մեր նշանավոր տասնիններորդ գործարանին, վորը կառուցվել է բոլշևիկների ձեռքով և կրում է քո անունը։ Գործարան, վորի մասին մեր պոետը՝ Անդրյուշա Գրիբինը հորինել է մի այսպիսի յերգ, վոր ավանի բոլոր փողոցներում հնչյուն, ուրախ և կենսախինդ ձայներով յերգվում է.

«Ուր անտառում և դաշտերում
Տարեցտարի քամին ել վոռնում,
Կամքով պրոլետարական
Աճեց տասնիններորդ գործարան։

Ուր համբ անապատի անհունում
Դարեր, տարիներ քամին ել յերգում,
Այնտեղ հիմա ձեռքով բոլշևիկների
Յերգն է հնչում մեքենաների։

Բառ առ բառ ինչպես յերգում
Մեքենայական ալիքն է հորդում,
Ուր նոր կյանքի հիմքերը
Յերգում է խորհրդային Յեկիրը։

Վեր ու վեր թռիչքն ստեղծագործական
Ծավալիր բռնկումը յեռուն,
Մեր գործարանը վողջ աշխարհում
Գնաք և լինի ու կը լինի առաջին։

Թե թշնամին յերկրին դիպչի,
Թե պայթի նոր պատերազմ—
Ինքնապաշտպանության մենք պատրաստ ենք
Մարդ, գործարան և յերկիր . . . .

Մեր ջղերն ամուր են պողպատից,
Կյանքը մեր՝ զարնանից կայտառ,
Վոշջուն քեզ, ժեր Ստալին,
Ցեավ ստախանովականներին պայծառ . . . .

Գործարկումի նախագահ՝ Ա. ՎԻՆՈԳՐԱԴՈՎ.
Նախագահի տեղակալ՝ Դ. ՉԵՐՑՈՄԻՆ.
Գործարկումի անդամներ յեվ
պրոֆակտիվիստներ՝ Վ. ԱՐԱԲՑՈՎ,
ԳՐԻՇԻՆ, ՊՈՆՈՄԱՐՑՈՎ, ՆԻԿԻՖՈՐՈՎ,
ՊՈՊՈՎ, Կ. ՆՈՍԿՈՎ, ԼՈՒԿԻՆ, ՓԵՎԵԶՆՈՎ.

(Ընդամենը 665 ստորագրություն)

ՄԵՍ. ՀԱՅԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-СССР А.
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

Պատ. խմբ.՝ Հենրի
Տեխ. խմբ.՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբ.՝ Աբր. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր Ս 466, հրատ. № 305, պատվ. № 96, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 1936 թվի փետրվարի 9-ին
Մտաբագրված է տպագրելու 1936 թվի փետրվարի 17-ին
2 տպագրական թերթ՝ 1 տպ. թերթում 20.480 տպ. նշ.

Գյուղնրատի տպարան, Ցերևան, Նալբանդյան № 11

ՀՀ Ազգային գրադարան
NL0193065

171

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

ПИСЬМО ТОВАРИЩУ СТАЛИНУ
ОТ ПРОФСОЮЗНОГО АКТИВА
ЗАВОДА № 19 ИМ. СТАЛИНА

В НОГУ СО СТАХАНОВСКИМ ДВИЖЕНИЕМ

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЭРИВАНЬ